[illegible] 1832 [illegible] 13 [illegible]
[illegible] 3 [illegible]

# ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

## ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Ըստ Ուղղափառութեան Եկեղեցւոյ Հայաստանեայց։

ՏՊԱԳՐԵՑԵԱԼ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տ՛ն Յակոբայ Սրբազան Կաթուղիկոսին Համօրէն Հայկազունեաց։

'Ի թուականութեան Արամեան. (ՌՃԺ.) Յամսեան Դեկտեմբերի. ԺԵ.
Իսկ 'ի Թուին Փրկչին. (1761.) 'ի քաղաքն Եզմիւռին.

'Ի տպարանի Մահտեսի Մարկոսի.

[illegible]

A 666

## ՕՐՀՆՒ ԱՌԱՒՕՏԵԱՆ

ապա Նկնղեցւոյ · Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել ։

## ՊՐՐՏԻ ՌՅՍՊԻՍ

խորհրդաւոր զգեստաւորիլ ։

Մտցէ յաւանդատունն հանդերձ սարկաւագօքն ուր զգեստքն են պատարագին ։

Եւ զգեցեալ պաշտօնէիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի ։

Ասասցեն ապա · Սաղմոս ճլա Աց ։

Դ

ՔԱՀԱնայք քո զգեցցեն զարդարութի՛ւ · և սուրբք քո ցնծալով ցնծասցեն · փոխ ։

Յիշեա՛ տր զդաւիթ եւ զամ հեզութիւն նորա ։

Որպէս երդուաւ տն · և ուխտս եդ այ յակոբայ ։

Թէ ոչ մտից 'ի յարկս տան իմոյ · թէ ելից յանկողինս մահճաց իմոց ։

Թէ տաց քուն աչաց 'իմոց · կամ նինջ արտեւանաց իմոց · կամ հանգիստ երանաց իմոց · մինչեւ գտից ըզ տեղի յարկի տն աստուծոյ յակոբայ ։

Ահա՛ լուաք զնմանէ յեփրաթայ · և գտաք զնա 'ի դաշտս մայրեաց ։

Մտցուք 'ի յարկս նորա · երկրպագեսցուք 'ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա ։

Արի՛ տէր 'ի հանգիստ քո դու և տապանակ կտակի սրբութեան քո ։

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն և սուրբք քո ցնծալով ցնծասցեն ։

Վասն դաւթի սիրելոյ քո · մի՛ դարձուցաներ զերեսս օծելոյ քում ։

Երդուաւ տէր դաւթի ճշմարտութիւն և ոչ ստեաց նմա

նմա. 'ի պտղոյ որովայնի
նորա նստուցանել յա
թոռ նորա :

Թէ պահեսցեն որդիք
քո զուխտս իմ և զվկայու
թիւս իմ զոր ուսուցից նց՟:

Որդիք նոցա նստցին յա
ւիտեանս յաւիտենից յա
թոռ քոյ:

Հաճեցաւ տր՟ ընդ սիոն.
և ընտրեաց բնակել 'ի նը
մա. ասէ այսէ' հանգիստ
իմ յաւիտեանս յաւիտե
նից. 'ի սմա բնակեցայց զի
հաճեցայ ընդ սա :

Զայրիս սորա օրհնելով
օրհնեցից. և զաղքատս
սորա լցուցից հացիւ:

Երեցանց սորա զգե
ցուցից զփրկութիւն. և
սուրբք սորա ցնծալով
ցնծասցեն :

Անդ ծագեցից եղջ իւր
'ի դաւիթ. պատրաստ արա
րեց զճրագ օծելոյ իմոյ

Թշնամեաց սորա զգեցու
ցից զամօթ. և 'ի վերայ
նորա ծաղկեսցի սրբու
թիւն իմ:

Փառք հօր և Որդւոյ և
Հոգւոյն Սրբոյ Ամ՟:

Եւ Քարոզեսցէ Սարկաւագն :

Եւ ես խաղաղութե՟ զՏր՟
աղաչեսցուք

Խնդրեսցուք հաւատով
միաբանութե՟ 'ի տնէ,
Զմէ զողորմութեան ըզ
շնորհս իւր արասցէ 'ի վե
րայ մեր :

Ամենակալ տէր ած՟ մեր,
Կեցուսցէ Եւ ողոր :

Եւ Ասասցեն Երկրպագեալն
Տր՟ ողորմեա :

Ով սրբազան պատարագիչ
Յիշեա Յաղօթս Քոյ
Զմատակարար Գործա
րանիս :

Եւ զհոգիս Ննջեցելոց
նորին 'ի քս՟ յս՟ :



Աղօթք Սրբամատոյցն Պատարագչի Քահանային
Յառաջ քան Զզգեստաւորիլն ։

# ՈՐԶԳԵ ՑԵԱԼ ԵՍ ԶԼ ՈՅՍ ՈՐՊԷՍ ՀԱՆԴԵՐՁ ՏԷՐ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ

քրիստոս ։ Անճառելի խոնարհութեամբ յերկիր երևեցար և ընդ մարդկան շրջեցար ։ Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին մելքիսեդեկի և զարդարեցեր զեկեղեցի քո վեհ ։ Տէր ամենակալ որ պարգևեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ ։ Արժանի արա և զիս ՝ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո ։ Որ համարձակիմ և մերձենամ՝ ՝ի նոյն հոգևոր պաշ

ա

տօն

տօն փառաց քոց ։
Որպէս զի զնա՛ ամբարշտութիւն մերկացայց որ է՝ հանդերձ պղծութե՛ և զարդարեցայց լուսով քով. ընկեա՛ յինէն զշարիս իմ, և թօթափեա՛ զյանցանս իմ։ Որպէս զի արժանի եղէց հանդերձեալ լուսոյդ առ ՚ի քէն ։ Շնորհեա՛ ինձ քահանայական փառօք մըտանել ՚ի պաշտօն սրբութե՛ց քոց , ընդ այնոսիկ որք անմեղութե՛բ պաշտեցին զպատուիրանս քո ։ Զի և ես պատրաստ գըտայց երկնաւոր առագաստին ընդ իմաստուն կուսանսն. փառաւորել զքեզ քո՛ որ բարձեր զմեղս ամենեցուն ։ Զի դու ես սըրբութի՛ւն անձանց մերոց և քեզ բարեբանեն ՚ի վայելէ՛ փառք Էշխանութի՛ւն ։

Եւ մատուցեալ Սարկաւագունքն՝ Զգեցուցանեն նմա զհանդերձն ամենայն. Եւ և խաղաղութեան ։ Փոխանակն Օրհնութի՛ւն ։ Եւ՛ յետ օրհնութեա՛նն զգեցուցանէ յառաջ զփորն ՚ի գլուխն և ասասցէ ։

ԴԻՐ ՏՐ սաղաւարտ փրկութե՛ն ՚ի գըլուխ իմ, պատերազմել ընդ զօրութիւս թշնամւոյն ։ Շնորհօք տն մերոյ յի քի որում վայելէ՛ ։

Շապիկն ։

Զգեցո՛ տէր ինձ հանդերձ փրկութե՛ ։ և պատմուճան ուրախութե՛ ։ Եւ՛ շուրջ պատեա՛ զզեստով փրկութե՛ ։ Շնորհօք ։

Գօտւոյն ։

Շուրջ պատեսցէ կամար հաւատոյ զմէջս սրտի և մտաց իմոց ։ Եւ՛ շիջուսցէ ՚ի նոցանէ զխորհուրդս աղտեղիս ։ Եւ՛ զօրութե՛ շը

որ

Նորհաց քոց յամ ժամ բնակեացէ՛ 'ի խոսս: Շնորհօք

Բաղպամին.

Տուր տէր զօրութիւն ձեռուին իմոյ, և լուա՛ զամ աղտեղութիս իմ: Զի կարող լինեցէմ սպասաւորել քեզ անաղտութեամբ հոգւոյ և մարմնոյ: Շնորհօք:

Պարանոցին.

Զգեցո՛ տէր պարանոցի իմոյ զարդարութիւն: Եւ սրբեա՛ զսիրտ իմ յամ աղտեղութենէ մեղաց: Շնորհօք

Կաշխարհին որն շուրջառ.

ՏՐ ողորմութեամբ քով ըզգեցո՛ ինձ զգեստ պայծառ, և պարսպեա՛ ընդդէմ ներգործութեան չարին: Զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ: Շնորհօք:

Յետ զգեստաւորելոյ սրբազան զգեստուցն ասէ:

Ցնծասցէ անձն իմ՛ 'ի տէր զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան. իբրև փեսայի եդ ինձ պսակ. և որպէս զհարսն զարդու զարդարեաց զիս: Շնորհօք:

Իսկ յետոյ եկեալեն առաջի տէր սեղանոյն: Իսկ քահանայն լուանայ զձեռս ասելով: Սաղմոս. ԻԵ. կց.

Լուացից սրբութեամբ զձեռս:

Սարկաւագն փոխ.

Դատ արա ինձ տէր զի ես:

Քահանայն.

Իջմ սրբութեան ածած

Սարկաւագն.

ԱՄ զածածին և զամ:

Քահանայն.

Ընկալ տէր զաղաչանս մեր: Խոստովանիմ առաջի ած և սրբուհւոյ ածածնին. Եւ առաջի ամ սրբոց. և առաջի ձեր հարք եղբարք զամ մեղս զոր գործեալ եմ, Զի անցի մեղայ խորհրդով բանիւ, եւ գործով: Իսկ ամ մեղօք զոր գործեն մեր

դինք

դինք ։ Մեղայ, մեղայ ։
Աղաչեմ զձեզ խնդրեցէք
վասն իմ յոյժ զթողութիւն ։

Պատասխանեսցեն որք մերձն են ․

Ողորմեսցի քեզ ա՟ծ հզօրն
և թողութիւն շնորհեսցէ ա՟մ
յանցանաց քոց, անցելոյն
և այժմուս, և յառաջակայ
ին փրկեսցէ և հաստատես
ցէ յա՟մ գործս բարիս ։ Նա
հանգուսցէ զքեզ ՚ի հան
դերձեալ կեանսն ․ Ամէն ։

Պատասխանեսցէ և նա ․

Ազատեսցէ՛ և զձեզ մար
դասէրն ա՟ծ, և թողցէ զա՟մ
յանցանս ձեր ։ տացէ ժամա
նակ ապաշխարելոյ և գոր
ծելոյ զբարիս ․ ուղղեսցէ
և զառաջակայ կեանս ձեր
շնորհօք ս՟բ հոգւոյն հզ
զօրն և ողորմածն և նմա
փառք յաւիտեանս ամէն ։

Դպիրքն ․

Յիշեսջիր զմեզ առաջի
անմահ Գառինն Ա՟յ ։

Քահանայն ․

Յիշեալ լիջիք առաջի
անմահ Գառինն Ա՟յ ։

Դպիրքն ․ Սաղմոս ․ ճժ ․ փոխ ․

Աղաղակեցէք առ տ՟ր ա՟մ

Սարկաւագն Քարոզէ ։

Ամ՟ եկեղեցական՟ս աղաչէ ։

Քահանայն ․

՚Ի մէջ տաճարիս և առաջի
ա՟ծընկալ և պայծառացեալ
ս՟բ նշանացս և ս՟բ տեղւոյս
խոնարհեալ երկիւղիւ եր
կիր պագանեմք ս՟բ և զհրա
շալի և զյաղթող զյարութիւ՟դ
քո փառաւորեմք, և քեզ
մատուցանեմք զօրհնութի՟
և զփառս ընդ հօր և ընդ
հոգւոյդ ս՟բյ այժմ և" ։

Քահանայն ասասցէ սղմս ․ խէ ․ կցորդ ․
Եւ ելցէ ՚ի խորանն ․

Մտից առաջի սեղանոյ Ա՟յ

Սարկաւագն փոխ ․

Դատ արա՛ ինձ ա՟ծ իմ և"

Սարկաւագն քարոզէ ․

Ա՟ս եւս խաղաղութ՟ զտ՟ր ։

Օրհնեցուք զՏէր ա՛ծ
մերոյ յէ՛ քն որ արժանիս ա-
րար զմեզ կալ ՚ի տեղւոջս
փառաբանութե՛ երգել
զերգս հոգեւորս ամենայ:

Բասիլեայն.

՚Ի յարկի սրբութե՛ ե՛ ՚ի խոր-
հուրդս փառաբանութե՛. հր-
եշտակաց բնակարանիս եւ
մարդկան քաւութեանս, ա-
ռաջի ամենակալ եւ պայծա-
ռացեալ մեք նշանացս եւ մե-
տեղւոյս խոնարհեալ եր-
կիւղիւ երկրպագանեմք.
զքեզ եւ զհրաշալի եւ զպայ-
թօղ զմեծութիւն քո օրհ-
նեմք եւ փառաւորեմք. եւ
քեզ ընդ երկնային զօրսն
մատուցանեմք զօրհնութի
եւ զփառս ընդ Հօր եւ ընդ
Հոգւոյդ Սրբոյ այժմ
եւ միշտ եւ յաւի
տեանս յաւի-
տենից
Ամէն:



Իսկ եթէ եպիսկոպոս լինիցի խորհրդա-
ծուն՝ ասասցէ ՚ի վերայ ժողովրդեան զպատարագական
երփերումն. յետ մատուցեալ առ ընծայա-
բան սեղանոյն. իսկ ՚ի ծածկել անկեալ յոր
դահոս արտասուօք լուռ եւ ամփոփեալ, ա-
սասցէ զաղօթս առ սուրբ Հոգին անօրէ-
նից գործոյս.

Գրիգորի Նարեկացւոյն.



ՄԵՆԱ
կալ ա՛ծ բարե-
րար եւ
մարդա-
սէր. ա՛ծ բոլոր էից. յօրի-
նող երեւութից եւ աներե-
ւութից. փրկող եւ հաստատող:
Խնամող եւ խաղաղարար
Հօր հզօր Հոգի:
Հայցեմք բազկատարած
մաղթանօք, գոչմամբ հե-
ծութեան, յանդիման ե-
ղեալ քեզ ահաւորիդ:
Մատչիմք մեծաւ զգուշու-
թեամբ սաստիկ երկիւղիւ
մատուցանել. նախ զբանա-
կանս զայս պատարագ քում
անզննին տէրութեանդ:

Ղ

Իբր աթոռակցի փառակ
ցի և տրապարզակցի , հայրե
նի անկապուտ պատուոյդ ։
Այժմ քննողի ծածկութե
խորոց խորհրդոց ամենա
կատար կամաց հօրդ Էմմա
նուելի. զքեզ առաքողի ,
փրկչի և կենդանատուի և
արարչի ամի ։ Ի ձեռն քո
ծանուցաւ մեզ երրեակ
անձնաւորութիւն միա
նական ածութենդ. յորոց
մի և դու ճանաչիս անհաս
Բանն և 'ի ձեռն քոյ ա
ւազինքն նահապետական
տոհմին շառաւիղք` ոե
սանօղք անճանաչելայք
զանցեալսն և զգալոցսն`
զեղեալսն և զոչ գոյացեալ
սըն, անըստեղբաբար բար
բառիլ բանի վերապատ
մեցին ։
Հօրդ քո` քարոզեալ ըզ
քեզ մովսէսի ։ Որ 'ի գնա
ըն քոյ 'ի վերայ ջուրցն

անպարագիր ըզօրութիւն ,
աշեղ շըշ[illegible]ութե տածո
զանկանոնն` եւ ապարփակ
պաշտպանողօրէն գթառի
բեալ 'ի ծնունդս նորոգս,
զաստուածային խորհուրդ
ծանուցեր ։
Յոր կերպըլան օրինակու
թեան` նախ քան զկատու
ցանել ըղզայծ մածուած
վերջնում վարագուրեդ`
յօրինեցեր կարօղ տեղա
պես զըղվանդակ ընութիւ
ամենից ընտանից բոլորից
գոյից ամ եից յանեից ։
Եւ ստեղծանելն 'ի նո
րոգուն յարուէ ամ եղել
քըս առ 'ի քեզ ։ Յայնմ
ժամանակի որ է` օր վեր
ջին այսր կենցաղի , և օր
առաջին` երկրին կենդա
նեաց ։ Եւ եղ ձեռայանդե
ցաւ միացէ կամացն` որ և
հօրն խորում`, ազդակցն
քո, էակիցն հօր` անուր
նինն

Նէկն որդէ ։

Սէրովս Քրիստոսէ , ըզ
քեզ ամենատարածանեաց մըշ
մարէս ամ հաճասար և
համագոյ հօր եւ որդւոյ հոգո
րէ ․ և զառ ՚ի քեզ հայհո
յութիւնն՝ անքամելի քա
րոզեաց ։ Նաև եբր զմծա
մարտից զքէն հեստեղոցն
զհարաբանական բերանան
կարկեաց ։ Նաև զխուրն շնոր
հեաց արդարն և անարատն,
գուէշն ամե ։ Որ մի մեղաց
մեղոց մատնեցաւ ․ և յա
րեաւ մի զմեզ արդարա
ցուցանելոյ ․ Դմա փառք
՚ի ձեռն քոյ ․ և քեզ բա
ըեբանութիւն ընդ հօր
ամենակալի , յաւէ
տեանս յաւէտս
նեց ․ Ամէն ։



Դարձեալ կըրկնեղից ՚ի նոյն կարգ բանի , մինչև վստահութիւն մերհայեցողութեան լուսոյ՝ հրաշափառ յայտնեցի ։ Աղօթեալ ամենատարածական միջնորդին կրկին զպաղա ղութեան ։

ԱՂԱՉԵՄ Ք
եաղերսեմք ար
տասուալից հա
ռաչմամբ
յամ անձնէ զփառաւո
րեալ տէրութիւնդ՝ ան
եղծ և անապատեղծ անժա
մանակ հօրդդ գթածի ։
Որ բարեխօսդ ես մի մեր
յանմառունչ հեծութիւնս՝
առ թողոմածդ հայր ։
Որ զբեան պահես , և զմե
ղուցեալս մաքրես , և տա
ճարս կազմես կենդանի և
կեցուցիչ կա հաջ բարձրեա
լըդ հօր ։ Արդ՝ աղաչեմ
զմեզ յամ անմաքուր գոր
ծոց՝ որ ոչ է հաճոյ քումդ
բնակութեան ։ Եթէ մի՛ շեղ
ցին առ ՚ի մէնջ լուսոյդ ՏՐ
Նորհաց փայլմունք՝ ՚ի տեսա
կան

Ար[illegible] [illegible]
1920 - [illegible] 1960 թ.

կանացս աչաց իմաստից ։
Վա՛ զի զքեզ ուսաք միա
նալ 'ի մեզ 'ի ձեռն աղօ
թից և ընտիր փառուցելոյն
կերոյ ։ Այլ քանզի մինդ
յերրորդութեդ պատարա
գի ․ և միւսդ ընդունի, հա
ճեալ ընդ մեզ հաշտարար
արեամբ անդրանկի իւրոյ ։
Իսկ դու ընկալցիս ըզմեր
պաղատանս և յորդարես
ցես զմեզ օթեւանս պատճա
կանս ա՛մ պատրաստու
թեամբ 'ի վայելուչն ճա
շակման երկնաւորը գա
ւենդ ։ Աղանց պատժոց
դատապարտութե ընդունել
զայս անմխհացուցեչ մանա
նայս կենաց նորոյ փրկուէ ։
Այլ հաւեացի 'ի հրոյս յայս
մանէ՝ զայթակղուէս մեր ․
որ՛ մարդարէին կենդա
նախարոյն կայծակամբն 'ի
ձեռն ունելեացն մատուց
ման ։ Զի յամի քոյդ քա

բողեալն զթութեն ․ որպէս
որդւոյն այ՛ հօրն քաղց
րութեն ։ Որ զանսատաւակ որ
դին մերձեցոյց 'ի հայրե
նի ժառանգութիւնն ․ և
զպատնեկան յառաջեցոյց
յերկնային արքայութին
արդարոցն երանութե ։
Այժմ որ այժմ և ես մի եմ
'ի նոցանէ ․ և զիս ընկալ
ընդ նոսին երբ մարդասի
րութե կարօտեալ մեծի ։
Զանուշհոտ քո աղբեր ․
զարեամբ քո սոսցեալս ։
Զի յայսմ նմի յուսում
ծանիցի քո մարդասիրու
թիւնդ ․ ընդ հօր փառա
ւորեալ համապատուարար,
'ի մի կամս և 'ի մի իշխա
նութիւն զօրութեան ։

'Ի Զայն ․

Զի քոյ է զթութի և կա
րողութի և մարդասիրու
թի, զօրութի և փառք յա
ւիտենս յաւիտենից Ամն ։

ապա

Ապա յարուցեալ դպիր առ ընծայարանի սեղանոյն։ Եւ որ մատուցանէ նախասարկաւագն զնշխարն։

Զոր առեալ Քահանայն դնէ ՚ի մաղզմայն ասելով.

Յիշատակ տեառն մերոյ
յիսուսի քի։
Որ բազմեալ հանգչի յան
արուեստ աթոռ. զմահ
խաչի յանձն էառ վասն
ազգի մարդկան. օրհնե
ցէք գովեցէք և բարձր
արար[illegible]ք զնա յա
[illegible]ւիտեան։

Իսկ առեալ զգինին՝ արկանէ խառնելով ՚ի սկիհն ասելով.

Յաղագս յիշատակի փրկա
գործ տնօրէնութեն նոյ
և փրկչին մերոյ յի քի։
Որ ՚ի կողահոս արեան աղ
բերէն նորոգեցան արա
րածք և անմահացան օրհ
նեցէք՝ գովեցէք և բար
ձր արարէք զնա յա
ւիտեան։

Իսկ ասասցէ զաղօթս ՚ի ծածուկ Յօհաննու Ոսկեբերանին։

Թ

Տր ած մեր որ զերկնա
ւոր հացդ զտրն մեր յս
քս զկերակուրդ ամ աշխար
հի՝ առաքեցեր փրկիչ
և կեցուցիչ և բարերար՝
օրհնել և սրբել զմեզ. ինք
նին դու տէր օրհնեա
և այժմ զառաջադրութիւս
զայս։ Ընկալ զսա յերկնա
յին քո սեղանդ։
Յիշեա որպէս բարերար
և մարդասէր զմատուցօղս
և վս որոց մատուցանի։
Եւ զմեզ անդատապարտ
պահեա ՚ի քահանայագոր
ծութն աստուածային խորհրդոց
քոց։ Զի ո՛ւ և փառա
ւոր է ամենապատիւ մեծ
վայելչութն փառացդ հօր
և որդւոյ և հոգւոյդ
սրբոյ այժմ և՛։

Իսկ սրօղեացն ասելով. Սաղմոս. Ղբ։

Տր թագաւ։ Զգեցաւ։
Համբարձան։ ՚Ի ձայնէ։
Սքանչելի։ Տան քում։

 Եւ

Եւ խաչակնքեսցէ նորա ասելով ։

Հոգին սբ եկեսցէ ՚ի քեզ եւ զօրութին բարձրելոյն հովանի լիցի ՚ի վերայ քոյ ։

Եւ արկանէ զխունկն ասելով ։

Խունկս մատուցանեմ առաջի քոյ քս բուրումն հոգևորական ։ Ընկալ ՚ի սբ յերկնային եւ յիմանալի քո մատուցարանդ ՚ի հոտ անուշից ։ Առաքեա՛ առ մեզ փոխարէն զշնորհըս եւ զպարգևս հոգւոյդ սրբոյ ․ եւ քեզ մատուցանեմք զփառս ընդ հօր եւ ընդ հոգւոյդ սբյ այժմ ։

Եւ ապա խնկելով ՚ի մէջ եկեղեցւոյն իջանէ հանդերձ սարկաւագօքն, եւ ելեալ ՚ի վեր երիցս երկրպագեսցէ զսեղանն․ Եւ նախասարկաւագն ՚ի մէջ եկեղեցւոյ կալով ձայնեսցէ ․

Օրհնեա՛ տէր ։

Եւ քահանայն ՚ի ձայն ասասցէ ։

Օրհնեալ թագաւորութիւն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սբյ այժմ եւ ։

Եւ սկսանին դպիրքն ժամամուտ ըստ պատշաճի աւուրն ․ Եւ յաւարտին՝ ձայնեսցէ նախասարկաւագն ։ Եւ եւս խաղաղութեն զտէր աղաչեսցուք ըն ։ Օրհնեա տէր ։

Եւ քահանայն ասասցէ ։

Օրհնութին եւ փառք հօր եւ

Խաղաղութին ամենեցուն ։

Դպ․ Եւ ընդ հոգւոյդ քո ։

Սրկ․ Աստուծոյ երկիրպագ․

Դպ․ Առաջի քո տէր ։

Եւ քահանայն ասասցէ ՚ի ձայն ։

Տէր ած մեր՝ որոյ կարողութիւնդ անքննին է ․ եւ փառքդ անհասանելի ։ Որոյ ողորմութիւնդ անչափ է ․ եւ գթութիւնդ անբաւ ։ Դու ըստ առատ մարդասիրութեանդ քում, նայեաց ՚ի ժողովուրդս քո՝ եւ ՚ի տաճարս այս սբ ։ Եւ արա ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր՝ առատապէս զողորմութիւնս քո եւ զգթութիւնս ։ Զի քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւ ։

Եւ

Եւ սկսանին ասել դպիրքն սաղմոս և շարական ըստ պատշաճին ։

Եւ մինչ նոքա երգեն, Քահանայն ասասցէ զաղօթս 'ի ծածուկ ։

Տէր Աստուած մեր կեցո՛ զժողովուրդս քո՛. և օրհնեա՛ զժառանգութիւն քո՛. զլրումն եկեղեցւոյ քո՛ պահեա՛. սրբեա՛ զնոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ։ Դու զմեզ փառաւորեա՛ Աստուածային զօրութեամբ քով. և մի՛ թողուր զյուսացեալս 'ի քեզ ։ Զի քո՛ է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւի՛՛ ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Որ հասարակաց զայս և միաձայն մեզ ամենեցուն՝ ուսուցեր աղօթել. և զերկուց և զերից միաձայնելոց յանուն քո՛ զխնդրուածս պարգևել խոստացար ։ Դու և այժմ զծառայից քոց զխնդրուածս առ 'ի յօգուտն կատարեա՛ ։



Շնորհելով մեզ յայսմ յաւիտենիս զգիտութիւն քում ճշմարտութեանդ ։ Եւ 'ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականս պարգևելով ։ Զի բարերար և մարդասէր ես Աստուած. և քեզ վայելէ փառք իշխ՛՛ ։

Եւ 'ի փառք տանն դպրացն երկիրպագեցեն առաջի բեմին ամենեքեան ։

Եւ քահանայն երկրպագելով սեղանոյն ասասցէ զաղօթս 'ի ծածուկ ։

Տէր Աստուած մեր՝ որ կարգեցեր յերկինս զդասս և զզօրս հրեշտակաց և հրեշտակապետաց 'ի սպասաւորութիւն փառաց քոց ։ Արա՛ այժմ ընդ մուտս մեր մտանել և ընդ հրեշտակաց. և լինել պաշտօնակից մեզ՝ և փառաբանակից քում բարերարութեանդ ։

'Ի Ձայն ։

Զի քո՛ է կարողութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեան՛՛ ։

Ամէն ։

Եւ համբուրեսցեն զմիմեանս, և սարկաւագունքն գոչեսցին.

## Պրոսխումէ։

Եւ սարկաւագաց մի ոմն բարձրացուցանէ զաւետարանն սբ.
Եւ դպիրքն ըստ խորհրդոյ աւուրն երգեն զերեքսրբեանն.

Սբ ած սբ և հզօր սբ և անմահ որ խաչեցար և այլն ։

Եւ քահանայն զայդ մին ասասցէ։

## ՚Ի ծածուկ։

Սբ ես՝ որ ՚ի սբս հանգուցեալ ես, և երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ՝ և քերովբէք փառաբանեն. և ամ երկնային զօրութիւնք՝ քեզ երկրպագանեն։ Որ ՚ի չգոյէ ՚ի գոյ ածեր զամ արարածս. որ արարեր զմարդն ըստ պատկերի քում և նմանութեան. և ամ շնորհիւ քով զնա զարդարեցեր. և ուսուցեր խնդրել զիմաստութիւն և զգօնութիւն։ Եւ ոչ անտես արարեր զմեղուցեալն այլ եդեր ՚ի վերայ նորա ապաշխարութիւն փրկութեան։ Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ և զանարժան ծառայս քո ՚ի ժամու յայսմիկ, կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ։ Եւ զօրհնաւոր երկրպագութիւն և զփառաբանութիւն մատուցանել քեզ։ Դու տէր՝ ընկալ ՚ի բերանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիւնս. և պահեա՛ զմեզ քոյին քաղցրութեամբ. թող մեզ զամ յանցանս մեր զկամաւորս և զակամայս։ Սրբեա՛ զհոգիս՝ զմիտս՝ և զմարմինս մեր. և շնորհեա՛ ՚ի սրբութեան պաշտել զքեզ զամ աւուրս կենաց մերոց ։ Բարեխօսութեամբ սրբուհւոյ ածածնին և ամ սրբոց քոց՝ որք յաւիտենից քեզ բարեհաճեցան։ Զի սբ ես տէր ած

Մեր. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս" :

Եւ ի կատարել երեք սրբենոյն և աղօթիցն սարկաւագն քարոզէ .

Եւ ևս խաղաղութեան զՏէր :

Սովին խաղաղութեան Տեառն աղ" :

Եւ քահանայն՝ բարձրատարած ասասցէ զաղօթս ի ծածուկ.

Տէր Աստուած մեր՝ զբազմապատաբան զաղաչանս ծառայից քոց մեր ընկալցիս և ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան քում : Զգթութիւն քո առաքեա ի վերայ մեր և ամենայն ժողովրդեանս՝ որք այն ունին առ ի քէն առատ ողորմութեանց :

Սարկաւագն ձայնեսցէ .

Օրհնեա՛ տէր :

Եւ քահանայն ասասցէ ի ձայն .

Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով և քեզ վայել" :

Յետ այսորիկ՝ երկրպագէ սեղանոյն քահանայն, և ելեալ բազմի յաստիճանն. և սկսանին դպիրքն սաղմոս ըստ խորհրդոյ աւուրն .

Դ



Եւ ընթերցին զգիրս մարգարէականս և առաքելականս .

Եւ զկնի աւետարանին, ըստ ցուցանելոյ ընթերցուածոյն. և յաւարտմանն, Սարկաւագն ձայնեսցէ.

Օրթի :

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ ի վերայ ժողովրդեանն ասելով :

Խաղաղութիւն ամենեցուն :

Դպիրքն .

Եւ ընդ հոգւոյդ քում :

Սարկաւագն .

Երկիւղածութեամբ :

Լուարուք :

Սարկաւագն .

Սուրբ Աւետարանն Ռ ըստ Մատթէոսի :

Դպիրքն.

Փառք քեզ Տէր Աստուած մեր :

Սարկաւագն.

Պռօսխումէ :

Դպիրքն.

Ասէ Աստուած :

Եւ Սարկաւագն ընթերցի : Զաւետարանն Սուրբ. Եւ յաւարտմանն ասասցեն Դպիրքն,

Փառք քեզ Տէր Աստուած մեր :

Եւ ապա ասեն զնիկիական դաւանութիւնն ի լման.

Հա

ՀԱՅՐ ՊՆ
ՀՆՁՅՆ ԵՆ ԳՐԱԴԱՐԱՆ
999

ժդ

ՀԱՒԱ
ՏԱՄՔ
՚ի մի ա՟ծ հայր
ամենակալ, յարարիչն եր
կնի և երկրի, երևելեաց
և աներևութից։
Եւ ՚ի մի տ՟ր յ՟ս ք՟ս յոր
դին ա՟յ, ծնեալն յա՟յ հօրէ
միածին. այսինքն յէու
թենէ հօր։
Ա՟ծ յաստուծոյ՝ լոյս ՚ի
լուսոյ՝ ա՟ծ ճշմարիտ՝ յա՟յ
ճշմարտէ ծնունդ և ոչ
արարած։
Նոյն ինքն ՚ի բնութենէ
հօր որով ամ՟ ինչ եղև յեր
կինս և ՚ի վերայ երկրի,
երևելիք և աներևոյթք։
Որ յաղագս մեր մարդկան
և վ՟ն մերոյ փրկութեան
իջեալ յերկնից մարմնացաւ
մարդացաւ ծնաւ կատարե
լապէս ՚ի մարիամայ սրբոյ
կուսէն հոգւովն սրբով։
Որով էառ մարմին հոգի
և միտ. և զամ՟ որ ինչ է ՚ի
մարդ, ճշմարտապէս և ոչ
կարծեօք։
Չարչարեալ խաչեալ թա
ղեալ, յերրորդ աւուր յա
րուցեալ. ելեալ ՚ի յեր
կինս նովին մարմնովն՝
նստաւ ընդ աջմէ հօր։
Գալոց է նովին մարմնովն
և փառօք հօր, ՚ի դատել
զկենդանիս և զմեռեալս։
Որոյ թագաւորութեանն
ոչ գոյ վախճան։
Հաւատամք և ՚ի ս՟բ հոգին
յանեղն և ՚ի կատարեալն։
Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի
մարգարէս և յաւետարանս։
Որ էջն ՚ի յորդանան քա
րոզեաց զառաքեալսն և
բնակեցաւ ՚ի սուրբսն։
Հաւատամք և ՚ի մի միայն
ընդհանրական և առաքե
լական եկեղեցի։

՚ի

՚Ի մի միութե՛ն , յապաշ
խարութե՛ն , ՚ի քահանութե՛ն ,
և ՚ի թողութե՛ն մեղաց ։
՚Ի յարութիւն մեռելոց ։
՚Ի դատաստանն յաւիտե
նից ։ Հոգւոց և մարմնոց
յարքայութե՛ն երկնից , և
՚ի կեանսն յաւիտենականս ։
Իսկ որք ասենն՝ էր երբե
մն յորժամ ոչ էր որդին .
կամ էր երբեմն յորժամ
ոչ էր ս՞բ հոգին . կամ թէ
յոչէիցելեն , կամ յայլմէ
էութէ՛ն ասեն լինել զոր
դին ա՞յ . և կամ զս՞բ հոգին
և թէ փոփոխելիք են կամ
այլայլելիք , զայնպիսիսն
նզովէ կաթուղիկէ և ա
ռաքելական ս՞բ եկեղեցի ։

Լուսաւորչին ասացեալ .

Իսկ մեք փառաւորեսցուք
որ յառաջ քան զյաւիտեանս
երկիրպագանելով ս՞բյ եր
րորդութե՛ն և միածութե՛ն
հօր և որդւոյ և հոգւոյն
ս՞բյ . այժմ և՛՛ ։



Սարկաւագն քարոզէ ՚ի ձայն .

Եւս խաղաղութե՛ն զ՞ր ։

Դպիրքն տեր ողորմեա .

Եւս հաւատով աղա՛՛ ։

Մինչ նոքա երգեն , քահանայն ասասցէ զաղօթս ՚ի ծածուկ .

Տ՞Ր մեր և փրկիչ յ՞ս ք՞ս
որ մեծդ ես ողորմութե՛ն ,
և առատ պարգևօք բարե
րարութե՛ն քո ։ Արդ դու քո
յին կամաւ ՚ի ժամուս յայս
միկ համբերեցեր չարչա
րանաց խաչի և մահու յա
ղագս մեղաց մերոց ։ Եւ
պարգևեցեր առատապէս
զպարգևս հոգւոյդ սրբոյ
երանելի առաքելոցն ։
Հաղորդս արա և զմեզ տ՞ր
աղաչեմք զքեզ ածային
պարգևացդ . թողութե՛ն մե
ղաց՝ և ընդունելութե՛ն
հոգւոյդ սրբոյ ։

՚Ի ձայն ։

Ա՞ր զի արժանաւորք եղի
ցուք գոհութե՛ փառաւորել
զքեզ ընդ հօր և ս՞բ հոգ՛՛ ։

Խաղաղութեան ամենեցուն։

Խաղաղութե՛ քով քս՛ փր կիչ մեր՝ որ ՚ի վե՛րես քան զամ միտս և զբանս։ Ամր ացո՛ զմեզ և աներկեւղ պահեա յամ չարէ․ համա րեա զմեզ ընդ ճշմա րիտ երկրպագուս քո՝ որք հոգւով և ճշմարտութե քեզ երկիրպագանեն․ զի ամենասուրբ երրորդութեդ վայելէ փառք յաւիտեանս։

Օրհնեալ տր մեր յս՛ քս՛ Ամէն։

Սարկաւագն։

Օրհնեա տէր։

Քահանայն խաչակնքէ ՚ի վերայ ժողովրդեանն ասելով ՚ի ձայն։

Տէ՛ր ած օրհնեսցէ զամէ"։

Յետ այսորիկ՝ եթէ եպիսկոպոսեցէ ՚ի բաց հանցէ զեմիփորոնն։

Եւ Սաղմոս ասասցէք ոն։

Դպիրքն ասեն զբարեպաշտութիւն ըստ խորհրդոյ աւուրն։

Եւ Ոչ՛ ոք յերախայից։

Դպ Ամբիոն տէրունական։

Պ

Եւ զան խնկարկելով ՚ի սուրբ խորհուրդն։

Եւ Յարեաւ եհար զխոս"։

Դպ Եւ ցնծանա ով հայր"։

Եւ ապա եղանակեսցեն։

Որք զքերովբէսն։

Եւ ապա Սարկաւագացն միաբաներէն սրբա զան հայրն՝ և անմահութե բաժակն ՚ի սբ սեղանն։ Եւ մինչ նոքա երգեն՝ քահանայն խոնարհեսցի առաջի սբոյ սեղանոյն և խորհրդաբար աղօթեսցէ ՚ի ծածուկ։

Ոչ ոք արժանի է յմբու նեցելոց մարմնաւոր ախ տիւք և ցանկուե մատչել ՚ի սեղան քո․ կամ սպասա ւորել արքունական փա ռացդ քոց։ Քանզի պաշ տել զքեզ մեծ և ահաւոր՝ երկնաւոր զօրութեանցդ իսկ է։ Այլ սակայն վս անչափ բարերարութե քոյ՝ անպա րագրելի բանդ հօր եղեր մարդ՝ և քահանայապետ մեր երեւեցար։ Եւ իբր տէր ամենեցուն՝ այսմ սպասա ւորութե՝ և անարեան զոհ ման՝ զքահանայութիւն

աւա

աւանդեսցէր մեզ։
Վ՜ զի դու ես տ՜ր ա՜ծ մեր
որ տիրես երկնաւորաց և
երկրաւորաց ։ Որ 'ի վ՜ր
քերոբէական աթոռոյ բազ
միս. սերոբէից տ՜ր և Թագա
ւոր Իս՜րյէլի։ Որ միայն ս՜բ
ես և 'ի ս՜բս հանգուցեալ։
Աղաչեմ զքեզ միայն բա
րերար և հեշտալսելի. նա
յեա՛ յիս 'ի մեղուցեալ և
յանպիտան ծառայս քո՛ ։
Եւ սրբեա՛ զհոգի և զմի
տս իմ յամ՜ պղծութենէ
չարին։ Եւ բաւականացո՛
զիս զօրութ՜բ ս՜բ հոգւոյդ
որ զգեցեալ եմ զքահա
նայականս շնորհ, կալ ա
ռաջի սրբոյ սեղանոյս և
քահանայագործել զք՜ո ա
նարատ մարմինդ և զպատ
ուական արիւնդ ։ Քեզ
խոնարհեցուցեալ զպարա
նոցս իմ, մաղթեմ. մի՛ դար
ձուցաներ զերեսս քո՛ յի
նէն. և մի՛ մերժեր զիս
'ի ծառայից քոց։ Այլ ար
ժանի արա՛ մատուցանել
քեզ զընծայս զայս յինէն
'ի մեղուցեալ եւ յանար
ժան ծառայէս քումմէ։
Վ՜ զի դու ես որ մատու
ցանես՝ և մատչիս՝ և ը՛նդու
նիս, և տաս ք՜ս ա՜ծ մեր։
Եւ քեզ փառս մատուցա
նեմք հանդերձ անըսկիզ
բըն քո՛ հարբդ և ամե
նասուրբ և բարե
րար հոգւովդ.
այժմ և միշտ
և յաւէտ"։

Եւ ընծայքն վերաբերին՝ 'ի սեղանն.
Եւ քահանայն ընկեսցէ և լուասցէ զձեռս
[illegible] ասելով։

Լուացից սրբութ՜բ զձեռս"։

Սարկաւագն.

Եւ ես խաղաղութ՜ն զտ՜ր ա՜։
Եւ ես հաւատով սրբէ"։

Մինչ նորա քարոզեն. Քահանայն բազ
կատարած աղօթեսցէ 'ի ծածուկ։

ՏԷՐ Ա͞Ծ
ԶՕՐՈՒ
Թեանց և արա
րիչ ա͞մ լինե
լութեանց: Որ յանէութենէ
զբնաւս 'ի ցուցակութի
ածեալ գոյացուցեր: Որ
և զմեզ զհողեղէն բնու
թիւնս պատուեալ մարդա
սիրապէս: Այսպիսի ահա
ւոր և անպատում խորհր
դոյ կարգեցեր սպասա
ւորս: Դու տէր՝ որում պա
տարագեսցէ զպատարագս
ընկալ առ 'ի մէնջ զառա
ջադրութիւնս զայս, և ա
ւարտեա զսա 'ի խորհրդա
կանութիւն մարմնոյ և
արեան միածնի քո․ տե͞ղ
Թողութեան մեղաց պա͞ր
գեւեա ճաշակողացս զհա͞ց
զայս և զբաժակս:

'ի Ձայն:

Շնորհօք և մարդասի
րութեամբ տ͞ն մերոյ և փրկ
չին յ͞սի ք͞սի․ ընդ որում
քեզ հօր միանգամայն և
հոգւոյդ սրբոյ վայելէ
փառք իշխան":

Խաղաղութի ամենեցուն:
Դպ Ընդ հոգւոյդ քո"
Սրկ Աստուծոյ երկիր պա":
Դպ Առաջի քոյ տէր:
Սրկ Ողջոյն տուք միմեա":
Դպ Ք͞ս 'ի մէջ մեր յայ":

Եւ համբուրեն զսեղանն և զմիմեանս․
և սարկաւագն ձայնեսցէ:

Ահե՛ կացցուք երկիւ":
Դպ Առ քեզ աստուած:
Սրկ Պատարագ ք͞ս մատ":
Դպ Ողորմութի և խաղա":

Վերացեալ դարձցի և խաչակնքեսցէ և
ասասցէ 'ի ձայն:

Շնորհք, սէր և ա͞ծ ային
սրբարար զօրութի՛ն հօր
և որդւոյ և հոգւոյն սրբոյ:
Եղիցի ընդ ձեզ ընդ ա
մենեսեան:

Գպ. Ամէն եւ ընդ հոգւոյդ քում:
Սրկ. Զդրունս զդրունս:
Գպ. Ունիմք առ քեզ Տէր:
Սրկ. Եւ գոհացարուք:
Գպ. Արժան եւ իրաւ:

Մինչ նոքա երգեն Քահանայն ձեռնամած աղօթեսցէ 'ի ծածուկ:

Արժա՛ն է ստուգապէս եւ իրաւ՝ ամենայորդոր փութով միշտ երկիր պագանելով փառաւորել զքեզ Հայր ամենակալ: Որ զքոյին անզննելի եւ արարչակից բանիւդ զանիծիցն բարձեր զկրճիւն: Նոր ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի սեփհականեա՛ց զհաւատացեալս 'ի քեզ: Եւ զննելի բնութեամբ ըստ 'ի կուսէն տնտեսութեան՝ հաճեցար բնակել 'ի մեզ: Եւ նորագործ աստուածապէս ճարտարապետեալ՝ զերկիր երկին արար: Վասն

զի որում ո՛չ հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք 'ի փայլակնացայտ եւ յանմատոյց լուսոյ Աստուածութենէդ: Յղեալ այդպիսեաց մարդ՝ յաղագս մերոյ փրկութեան շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս:

'ի Ձայն:

Եւ ընդ սերովբէսն եւ ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս. եւ համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին եւ ասել:

Դպիրքն.

ՍԲ ՍԲ ՍԲ ՏՐ զօրութեանց լի են երկինք եւ երկիր փառօք քո օրհ՛:

մի

Մ՛ինչ նոքա երգեն, ՚Քահանայն բարձր
տարած ասասցէ ՚ի ժամուն

Սուրբ՝ սուրբ ես ճշմարտապէս և ամենասուրբ. և ո՛վ ոք պանծասցի բովանդակել բանիւ զքո ՚ի մեզ զանբաւ բարերարութեան զեղումն: Որ և անդէն իսկ ՚ի նախնումն զանկեալն ընդ մեղօք զանազան եղանակօք՝ խնամեալ մխիթարեցեր: Մարգարէիւք, օրինացն տուչութե՛, քահանայութեամբ, . և զուարակներով երնջոցն մատուցմամբ:

Իսկ ՚ի վախճան աւուրցս այսոցիկ՝ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիք: Տուր մեզ զորդին քո միածին, պարտապան և պարտս. զենումն և օծեալ. գառն և երկնաւոր հաց. քահանայապետ և պատարագ:

Քանզի ինքդ ես բաշխող. և նոյն ինքդ բաշխիս ՚ի միջի մերում միշտ անծախապէս:

Քանզի եղեալ հաւատեաւ և առանց ցնորից մարդ. և անշփոթ միաւորութեամբ մարմնացեալ յածածնէն և ՚ի նոյն կուսէն մարիամայ:

Ճանապարհորդեաց ընդ ամ՛ կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց: Եւ յաշխարհակեցոյցն՝ և առ իւրն փրկութեան մերոյ՝ եկեալ համակամ ՚ի խաչ: Առեալ զհացն՝ ՚ի սուրբ յածային՝ յանմահ՝ յանարատ՝ և յարարչագործ՚ ՚ի ձեռս իւր. օրհնեաց՝ գոհացաւ՝ եբեկ՝ և ետ իւրոց ընտրեալ սուրբ և բազմեալ աշակերտացն ասելով:

՚Ի Ձայն:

Ա առ

Առէ՛ք Կերէ՛ք Այս է՛
ՄԱՐՄԻՆ ԻՄ՝
որ վ՟ս ձեր և բազմաց բաշ
խի ՚ի քաւութե՟ն և ՚ի թո
ղութիւն մեղաց:

՚Ի ձայնակ։

Նոյպէս և զբաժակն ա
ռեալ. Օրհնեա՛ց՝ գոհա
ցաւ՝ եարբ՝ և ետ իւրոց
ընտրեալ սբ՟ և բազմեալ ա
շակերտացն ասելով:
Արբէ՛ք ՚ի սմանէ
Ամենեքեան. Այս է՛
ԱՐԻՒՆ ԻՄ՝
նորոյ ուխտի, որ յաղագս
ձեր և բազմաց հեղանի ՚ի
քաւութե՟ն և ՚ի թողութե՟ն մեղաց

՚Ի ձայնակ։

Որ զայն միշտ իւր յիշա
տակ աւանդելով, պատուիրան
աւանդեաց մեզ բարերար
որդի քո միածին: Որ է
ջեալ ՚ի սուրբն, վասն մա
հու մարմնոյս՝ զոր ՚ի մեր
մէս ընկալաւ յազգակցութե՟
Զ

Որ զնիզս զժոխոցն ա
ղարտեալ հզօրեղապէս:
Ընդ մեզ միայն ծանոյց
մեզ ճշմարիտ ած՝ զածդ
կենդանեաց և մեռելոց:

Ժղ՟ ասեն. Զնծայն ՚ի ձեռն
Ժղ՟ ասացէ ՚ի ձայնակ։

Որ արդ մեք տր՝ բստ
պատուիրանատրութե՟ն քո
առաջ բերեալ զայս խոր
հուրդ փրկական մարմնոյ
և արեան միածնի
քո:

Յիշեմք զդորս որ վ՟ս մեր
զփրկագործ չարչարանսն:
Ըզկենսատու խաչելութի՟նն:
Զերեք օրեայ թաղումնն:
Զերանելի յարութի՟ն:
Զածային համբարձումնն,
Ըզնստելն ընդ աջմէ քո հայր
Զահաւոր և զփառաւո
րեալ ըզմիւսանգամ
գալուստն խոստո
վանիմք և օրհ
նեմք:
եւ

Եւ ժամայն սակաւ ինչ բարձրացուցեալ
մատուսցէ առ հայր.

Եւ դիցէ ՚ի վերայ սրբոյ սեղանոյն
ասելով ՚ի ձայն.

Եւ զքոյս՝ ՚ի քոյոց՝ քեզ
մատուցանեմք ըստ ամե
և յաղագս ամենեցուն։

Դպ. Յամ օրհնեալ ես տր։

Մինչ նոքա՝ երգեն՝ Քահանայն բաց
կատարած ասասցէ ՚ի ծածուկ.

Զքեզ արդարև ակք ամ
մեր գովեմք. և զքեզ գո
հանամք հանապազ։ Որ
զանցաւորաբեր զմեռոյ ա
նարժանութիւնս. այսպէս ահա
ւոր և անպատում խորհր
դոյ կարգեցեր սպասա
ւորս։ Ոչ յաղագս մերոց
ինչ բարեգործութեանց,
յորոց յոյժ թափուր եմք
և միշտ ունայն գտանիմք
հանապազ։ Այլ ՚ի քո
բազմազեղ ներողութեն
ցանդ. ապաւինեալ համար
ձակիմք մերձենալ ՚ի սպա
սաւորութիւն մարմնոյ և

արեան միածնի քոյ տն մե
րոյ և փրկչին յի քի. ո
րում վայելէ փառք իշ"։

՚ի ձայն. Խաղաղութի ամենե"։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Աստուծոյ երկիրպագ"։

Դպ. Առաջի քոյ տէր։

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն խոնար
հեալ երկիրպագցէ սեղանոյն և ասասցէ։

Երկիրպագանեմք՝ և ա
ղաչեմք՝ և խնդրեմք ՚ի քէն
բարերար ած։ Առաքեա՛
՚ի մեզ և յառաջի եդեալ
ընծայս այս՝ զմշտնջենա
ւորակից քո և զէակից սբ
հոգիդ։

Դպ. Որդի այ որ պատա"։

Եւ կացեալ սարկաւագն առ ընթեր քա
հանայսին երկիւղիւ և զգուշութե մեծաւ.
Եւ ասասցէ ՚ի ցած Ամէն օրհնեա տէր.
Եւ Քահանայն խաչակնքեսցէ զնշխարն
ասելով ՚ի ծածուկ.



ՐՈՎ զհացս օրհնեալ
մարմին ճշմար
տապէս արաս
ցես

ցես տն մերոյ և փրկչին
յիսուսի քրիստոսի ։

Որով զհացս օրհնեա☞լ մար
մին ճշմարտապէս արարցես
տն մերոյ և փրկչին յս քս ։

Որով զհացս օրհնեա☞լ մար
մին ճշմարտապէս արարցես
տն մերոյ և փրկչին յս քս ։

Եւ զբաժակս օրհնեա☞լ ա
րիւն ստուգապէս արարցես
տն մերոյ և փրկչին յս քս ։

Եւ զբաժակս օրհնեա☞լ ա
րիւն ստուգապէս արարցես
տն մերոյ և փրկչին յս քս ։

Եւ զբաժակս օրհնեա☞լ ա
րիւն ստուգապէս արարցես
տն մերոյ և փրկչին յս քս ։

Որով զհացս և զբաժակս օրհ
նեա☞լ մարմին և արիւն
ճշմարտապէս արարցես տն
մերոյ և փրկչին յս քս փո
խարկելով հոգւովդ քով
սրբով ։

Երեքս կրկնեսցէ ։

Եւ սա ասասցէ ՚ի ձայն ։



Որպէս զի եղիցի սա ամենե
ցուն մեզ մերձեցելոցս ,
յանդատապարտութիւն ի
քաւութիւն և ՚ի թողութիւն
մեղաց ։

Եւ քահանայն այսուհետև ոչ բարձրա
գոյն քան զմիջայն զձեռսն իւր տարա
ծեալ , այլ՝ խոնարհագոյն ։ Եւ ձեռքն ՚ի
նոյն յաւելեալ աղօթեսցէ ՚ի ժամուն ։

Սովաւ շնորհեա՛ զսէր ըզ
հաստատութիւն և զցանկալին ըզ
խաղաղութիւն ամ աշխարհի ։
Սբ եկեղեցւոյ և ամ ուղ
ղափառ եպիսկոպոսաց ։
Քահանայից ։ Սարկաւա
գաց ։ Թագաւորաց ։ Աշ
խարհի ։ Իշխանաց ։ Ժողովր
դոց ։ Ճանապարհորդե
լոց ։ Նաւելոց ։ Կապելոց ։
Վտանգելոց ։ Աշխատե
լոց ։ Եւ որք ՚ի պատերազ
մտանեն ընդ բարբարոսաց ։ Սո
վաւ և օդոց շնորհեա՛ ըզ
բարեխառնութիւն . և անդոց
զպտղաբերութիւն ։ Եւ ախ
տացելոց ՚ի պէսպէս ցաւս՝
փու

փութապէս զառողջութե՛ն: Սովաւ՜ հանգո՛ զամե՛նե-սեան յառաջագոյն ՚ի Քրիս-տոս զընծեցեալսն:

Ըզնախահարս :

Ըզհայրապետս :

Ըզմարգարէս :

Զառաքեալս :

Զվկայեալս :

Զեպիսկոպոսունս:

Զերէցունս :

Զսարկաւագունս:

Ի՜ զընծա՜ ուխտ եկեղե-ցւոյ քոյ սրբոյ: Ի՜ զամե-նեսեան ․ յաշխարհական կարգէ զարս և զկանայս հաւատով վախճանեալս:

՚ի Ձայն:

Ընդ որս և մեզ այց արաս-ցես բարերար ա՛ծ աղաչեմք:

Դպիրքն ․

Յիշեա՛ տէր և ողորմեա՛:

Քահանայն ․

Ա՜ծածնին սրբոյ կուսին Մարիամու : Ի՜ յովհան-

Զ

նու մկրտչին : Ստեփան-նոսի նախավկային : Ի՜ ա՛մ ս՛րց եղիցի յիշատակ ՚ի ս՛բ պատարագս աղաչեմք:

Դպիրքն ․

Յիշեա՛ տէր և ողորմեա՛:

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն Ձայնամած Ասասցէ ․

Առաքելոց ս՛րց մարգա՛":

Ի՜ մինչ նոքա երգեն զշարողն՝ Քահանայն ասասցէ զաղօթս զէ ՚ի մտաւին անձայնակցին ․

Յիշեա՛ տէր և ողորմեա՛, և օրհնեա՛ զս՛բ կաթուղի-կէ և զառաքելական եկե-ղեցի քո՛ : Զոր փրկեցեր պատուական արեամբ միած-նի քոյ․ և ազատեցեր խա-չիւ՜ն ս՛բ՛ով: Շնորհեա՛ ս-մա զանշարժ զխաղաղութի՛ւ:

Յիշեա՛ տ՛ր և ողորմեա՛, և օրհնեա՛ զա՛մ ուղղափառ եպիսկոպոսունս՝ որք ու-ղիղ վարդապետութե՛ հա-մառօտեն ՚ի մեզ զբանն ճշմարտութեան:

՚ի Ձայն:

Եւս առաւել զեպիսկոպոսապետն մեր, և զպատուական հայրապետն մեր Հայոց զՏէր ( այս անուն ) շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեան ։

Եւ դարձեալ սարկաւագն գայ 'ի տեղի իւր . Եւ քարոզեսցէ բարձր ,

Գոհութի̃ և փառաբանս ։

Մինչ նորա քարոզէն Քահանայն ասասցէ զաղօթս 'ի ծածուկ.

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛, և օրհնեա՛ զքո՛ առաջի կացեալ ժողովուրդս՝ և զնպատարագիս մատուցօղս ։ Եւ պարգևեա՛ նոցա՛ զնպիտոյսն և զօգտակարսն ։ Յիշեա՛ Տէր և ողորմեա՛, և օրհնեա՛ զուխտաւորս և զպտղաբերիչս Եկեղեցւոյ քում սրբոյ . և որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ ։ Եւ հատո՛ նց̃ զպարտս նց̃ ըստ ընդարձակ առատուե̃

Ի

իւ

քում հարկաւորապէս ասատ և 'ի հանդերձելումդ ։ Յիշեա՛ Տէր և ողորմեա՛, և գթա՛ 'ի հոգիս հանգուցելոցն ։ Հանգո՛ զնոսա և լուսաւորեա՛՝ և դասաւորեա՛ ընդ Սրբս քո՛ յարքայութեանդ երկնից . և արժանի արա՛ ողորմութեան քում ։

Յիշեա՛ Տէր և զհոգի ծառայիս քոյ . ( այս անուն ) . և ողորմեա՛ նմա ըստ մեծի ողորմութե̃ քում, և հան զն՛ այցելութեամբ 'ի լոյս երեսաց քոց ։ Եւ թէ կենդանի է՝ փրկեա՛ զնա յամ որոգայթից հոգւոյ և մարմնոյ ։ Յիշեա՛ Տէր և զայնոսիկ որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս, զկենդանիս և զհանգուցեալս . և կառավարեա՛ զ[illegible] մն Հայոց մանց նոցա[illegible] զմերս, ընդ ուղ

ուղղորդն և որ լի՛ն է փր
կութեամբ ։

Այժմ փառաբանեա՛ բոլորե
ցունց զանանց և զերանե
լի բարութենդ ։ Այժմ զը
ռեալ զխորհուրդս մեր տա
ճարացդ յընդունակութե
մարմնոյ և արեան միածնի
քոյ տն մերոյ և փրկչին յե
քի · ընդ որում քեզ հօր
ամենակալի հանդերձ կեն
դանարար և ազատիչ սբ
հոգւովդ · վայ″ ։

Բռնանայն զարծյ և խաչակնքեսցէ և
ասասցէ ՚ի ձայն ։

Այժմ եղիցի ողորմութի մե
ծի Այ և փրկչիս մերոյ յե
քի , ը ձեզ ըամենեսեանդ ։

Դպ. Ամէն եւ ը հոգւոյդ քո″ ։

Սրկ. Ամէն ևւս խաղաղութ
զՏր աղաչեսցուք ։

Ամենայն սրբովք զորս յի
շատակեցաք ես առաՃ″ ։

Վս մատու... ուրբ է″ ։

Մինչ սարկաւագն քարոզէ՝ քահանայն
ասասցէ ՚ի ծածուկ ։

Ա՜յ ճշմարտութե և հայր
ողորմութե՝ գոհանամք ըզ
քէն ։ Որ ՚ի վեր քան զե
րանելին նահապետացն , ըզ
մեր պարտաւորելոցս առա
ջ եւ մեծարեցեր զընութե ։
Վս զի նց ած կոչեցար ·
իսկ մեզ՝ հայր հաճեցար ա
նուանել գթալով ։ Ա՜յ
այժմ տր աղաչեմք զքեզ,
զայսպիսի առ ՚ի քէն զնո
րոգ և զպատուական անուա
նադրութես շնորհ ։ Որ
ըստ օրէ պայծառացու
ցեալ ծաղկեցո՛ ՚ի մէջ ե
կեղեցւոյ քում սրբոյ ։

՚ի Ձայն ։

Ա՜յ տուր մեզ համարձա
կաձայն բարբառով բա
նալ զբերանս մեր կարդալ
զքեզ երկնաւորդ հայր ,
երգել և ասել ։

Եւ

Եւ Դպիրքն . Բազկատարած Նշանա կեսցեն .

Հայր մեր որ երկինս ես։

Մինչ նոքա՛ երգեն՝ Քահանայն աղօ թեսցէ 'ի ծածուկ .

ՏԷՐ տէրանց ած աստուա ծոց . Թագաւոր յաւիտենա կան . արարիչ ամ արարա ծոց , Հայր տն մերոյ յի քի։ Մի՛ տար զմեզ 'ի փորձու թիւն , այլ փրկեա՛ 'ի չարէ և ապրեցո՛ 'ի փորձութենէ ։

'Ի Ձայն ։

Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յա ւիտեանս ամէն ։

Խաղաղութի ամենեցուն ։

Դպիրքն .

Եւ ընդ հոգւոյդ քում ։

Սարկաւագն .

Աստուծոյ երկիրպագեաս ։

Դպիրքն .

Առաջի քո տէր ։

Սարկաւագն .

Օրհնեա՛ տէր ։

Քահանայն խոնարհեսցի և ամ ժողո վուրդն չոքեսցի 'ի ծունկս .

Եւ Քահանայն աղօթեսցէ 'ի ծածուկ .

Որ աղբիւրդ ես կենաց և բղխումն ողորմութե հոգիդ սբ ։ Ողորմեա՛ ժողովր դեանս , որք խոնարհեալ երկիր պագանեն ածութե քում ։ Պահեա՛ զսոսա՛ ամ բողջս , տպաւորեա՛ յոգւոց սոցա՛ զձև մարմնոյ ցու ցակի ։ Առ 'ի ժառանգու թիւն և 'ի վիճակ հան դերձելոցդ բար եաց ։

'Ի Ձայն ։

Քրիստոսիւ Յիսուսիւ տեառամբ մերով . ընդ որում քեզ հոգւոյդ սրբոյ և հօր ամենակալի վայելէ փառք իշխանութիւն և պա՛ ։

Եւ քահանայն առցէ զսուրբ հացն 'ի ձեռն . Եւ Սարկաւագն ձայնեսցէ բարձր .

Պրօսխումէ ։

Եւ

Եր

Եւ քահանայն բարձրացուցանէ աջներբև ամենայն ժողովրդեանն. Եւ ասասցէ ՝ի ձայն:

**՝Ի Սրբութիւն Սրբոց:**

Դպիրքն Բարձր Ձայնիւ.

**Միայն Սբ, միայն Տր:**

Քահանայն.

**Օրհնեալ Հայր Սուրբ ԱԾ Ճշմարիտ:**

Դպիրքն. Ամն՟.

Քահանայն.

**Օրհնեալ Որդի Սուրբ ԱԾ Ճշմարիտ:**

Դպիրքն. Ամն՟.

Քահանայն.

**Օրհնեալ Հոգի Սուրբ ԱԾ Ճշմարիտ:**

Դպիրքն. Ամն՟.

Քահանայն.

**Օրհնութիւն Եւ փառք Հօր Եւ Որդւոյ Եւ Հոգւոյն Սբյ, Այժմ:**

Դպիրքն. Ամն՟.

**Հայր ՍԲ Որդի ՍԲ Հոգի ՍԲ. Օրհ՟:**

Եւ մինչ նոքա երգեն զայս, Քահանայն խոնարհեսցի եւ Աղօթեսցէ ՝ի ծածուկ.

**Նայեաց տէր մեր յս՟ քս՟ յերկնից՝ ի սրբութենէ քումմէ, և յաթոռոյ փառաց թագաւորութե՟ քոյ. եկ՝ ի սրբել և՝ կեցուցանել զմեզ Որ ընդ Հօր նստիս և աստ պատարագիս:**

**Արժանի արա՛ տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ և՝ ի պատուական արենէ. և՝ ի ձեռն մեր ամ՝ ժողովրդեանս:**

Եւ զայս. ասացեալ երկրպագեսցէ և համբուրեսցէ զսեղանն.

Եւ առեալ զբր Սարկաւագն ողջ Թւացցէ յանապական Աղեան և Ըմբացէ.

**ՏՐ ԱԾ մեր որ կոչեցեր զմեզ յանուն միածնի որդւոյ քո՛ քրիստոնեայս. և շնորհեցեր մեզ մկրտութ՟ հոգևոր աւազանաւն ՝ի թողութի՟ մեղաց. և արժանի**

Ի

նի արարեր զմեզ հաղոր֊
դել ը՟դ մարմնոյ եւ արեան
միածնի քոյ։ Եւ այժմ ա֊
ղաչեմք զքեզ տէր՝ արա՛
զմեզ արժանի ընդունել
զս՟բ խորհուրդս զայս մեզ
՚ի մեղաց թողութիւն ։
Եւ գոհութ՟բ փառաւորել
զքեզ ը՟դ Որդւոյ եւ ս՟բ
Հոգւոյդ այժմ եւ"։

Եւ բարձրացուսցէ ակներեւ ժողովն զձայնն եւ ասասցէ․ ՚Ի ձայն ։

՚Ի ս՟բ ՚ի ս՟բ պատուական
մարմնոյ եւ յարենէ տ՟ն մե
րոյ եւ փրկչին յ՟ի ք՟ի ։
Ճաշակեսցուք սրբութ՟բ
որ իջեալ ՚ի յերկնից բաշխի
՚ի միջի մերում ։
Սա՛ է Կեանք, Յոյս,
Յարութի՟, Քաւութի՟,
Եւ թողութիւն մեղաց ։
Սաղմոս ասացէք տ՟ն ա՟յ մե"։
Սաղմոս ասացէք երկնա
ւոր Թագաւորիս մերում
անմահի, որ նստի ՚ի կառս
քերովբէականս ։



Սարկաւագն Ձայնեսցէ․

Սաղմոս ասացէք տեառն
ա՟յ մերում ։

Եւ Դպիրքն եղանակեսցեն ․

Ք՟ս պատարագեալ ։

Մինչ նոքա երգեն, Քահանայն առցէ զՄարմինն ՚ի ձեռն ․ Եւ համբուրեսցէ Արտասուօք ասելով ․

Զո՞ր Օրհնութի՟, կամ
զո՞ր Գոհութի՟ ՚ի վերայ
Հացիս Եւ բաժակիս ա֊
մատուցուք ։
Այլ մի՟ զքեզ միայն օրհ
նեմք հանդերձ Հարբ եւ
ամենասուրբ Հոգւովդ ա՟յ"։

Դարձեալ ասասցէ ․

Խոստովանիմ եւ հաւա
տամ, զի դու ես Քրիստոս
որդի ա՟յ, որ բարձեր ըզ
մեղս աշխարհի ։

Եւ բեկեալ արկցէ ՚ի բաժակն Արեան ասելով ․

Լրումն Հոգւոյն Սրբոյ ։

Եւ ապա Առեալ զմի մասն ՚ի ձեռն ,
Նայեսցի արտասուօք Եւ գոհութեամբ
առ Հայր Եւ Որդի ՚Ի ձայնակ ․

Լ

ՀԱՅՐ ՄԵՐ
որ անճանե
ցեր զմեզ ա
նճանաչութեամբ
մտածնէ քոյ:
Եւ լուսաւորեցեր մեր
տուեալ հոգեւոր աճապանեն
Արժանի արա ընդունել
զսուրբ խորհուրդս զայս
մեզ ՚ի մեղաց թողութիւն.
տպաւորեա՛ ՚ի մեզ զշնորհ
հս հոգւոյդ սրբոյ, որպէս
՚ի սուրբ առաքեալսն որք
ճաշակեցին և եղեն մաք
րիչք ամենայն աշխարհի:
Եւ արդ ո՛վ հայր բարե
րար, զհաղորդութիւս զայս
մասնաւորեա՛ ճաշակման
երեկոյին աշակերտացն,
բառնալով զխաւար մե
ղաց. մի՛ հայիր յանարժա
նութիւն իմ. և մի՛ արգելցես
զշնորհս հոգւոյդ քո:
Այլ ըստ անբաւ մարդա
սիրութեան քում, պարգե

և՛ զսա՛ քաւիչ մեղաց, լու
ծիչ յանցանաց: Որպէս խոս
տացաւ և ասաց տէրն մեր
յս քս թէ՝ իմ որ ուտէ
զմարմին իմ և ըմպէ զա
րիւն իմ, կեցցէ ՚ի յաւի
տեան: Արդ՝ արա՛ զսա՛ մեզ
՚ի քաւութիւն, զի որք կե
րիցեն և արբիցեն ՚ի սմա
նէ, հասցեն զօրհնութիւն
և ըզ փառս հօր և Որդ
ւոյ և հոգւոյդ սրբոյ
այժմ և միշտ և յաւիտեան":

Խաղաղութիւն ամենեցուն

Գոհանամ զքէն քս թա
գաւոր, որ արժանի արա
րեր զանարժանս հաղոր
դել սուրբ մարմնոյ և ա
րեան քոյ: Եւ այժմ ա
ղաչեմ զքեզ մի՛ լիցի սա՛
ինձ ՚ի դատապարտութիւն,
այլ ՚ի քաւութիւն և ՚ի թո
ղութիւն մեղաց. առող
ջութիւն հոգւոյ և մար
մնոյ. և ՚ի կատարումն ամ

գոր

գործոց առաքինութեան։
Որպէս զի սրբեսցէ սա՛
զշունչս իմ․ և զհոգի և
զմարմին իմ։ Եւ արաս
ցէ զիս տաճար և բնակա
րան ամենասուրբ Երրորդու
թեանդ։ Զի ընդ սբս
քո՛ արժանի եղէց փառա
ւորել զքեզ ընդ Հօր և
ընդ Սբ Հոգւոյդ այժմ։

Յովհաննու Ոսկեբերանին
Նասցեալ Աղօթք․

Փոխանամ և մեծացուցա
նեմ և փառաւորեմ՛ զ
քեզ Տր Ած իմ, զի զիս
զանարժանս արժանացու
ցեր յաւուր յայսմիկ հա
ղորդակից լինել Ածային և
սոսկալի խորհրդոյ քում․
անարատ մարմնոյդ և պա
տուական արեանդ․ վասն
այսորիկ զսոսա՛ 'ի բարեխօ
սութին ունելով, աղաչեմ՛
յամ աւուրս և 'ի ժամա
նակս կենաց իմոց Է սրբ

բութեն քոյ պահեա՛ զիս։
Որպ զի յիշելով զշարե
գրութիւնս քո՛ և կենդանի
եղէց ընդ քեզ։ Որ մն
մեր չարչարեցար և մեռար
և յարեար․ մի՛ մերժեսցի
տէր իմ և Ած խորտակեցն,
կնքելով անձին իմոյ պա
տուական Սբ արեամբդ քով։
Ամենակարող մաքրեա՛
զիս ոտքոք յամենայն մե
ռելոտի գործոց իմոց, որ
միայնդ ես անմեղ։ Ամ
րացո՛ զկեանս իմ տէր,
յամ փորձութենէ․ և ըզ
պատերազմօղն իմ դարձո՛
յինէն յետս, պատկառեալ
և ամաչեցեալ որ չափ յառ
նէ 'ի վերայ իմ։ Ամրացո՛
զգնացս մտաց և լեզուի
իմոյ, և զամ ճանապարհս
մարմնոյ իմոյ։ Եւ Տէ՛ր Հանա
պազօրդ ընդ իս, բստ ըստ
խոստմանց քոց, թէ
որ ուտէ զմարմին իմ,
և

և ըմպէ զարիւն իմ, նա՛ յիս բնակեսցի և ես 'ի նմա։ Դու տացես մե՛ր դասակէր, կացո՛ զբանս ա՛ծային անլուծանելի հրամանաց քոց։ Քան զի դու ես աստուած ողորմութեան, և գթութեան և մարդասիրութե՛ն և պարգևիչ ամենայն բարեաց․ և քեզ վայելէ փառք հանդերձ հարբդ և ամենասուրբ հոգւովդ այժմ և միշտ"։

Ապա տեառնագրեսցէ զինքն․ և խնդրեսցէ 'ի ճշմարտին աստուծոյ զայսպէս հայցմանս անձին իւրոյ․ և ժողովրդեանս, և աշխարհի․ և թողութիւն խնդրեսցէ իւրոց յանցանաց․ թշնամեացն և ատելեացն։ Ապա անդէն ահիւ և գոհութեամբ ճաշակեսցէ 'ի մարմնոյն․ և արբցէ 'ի բաժակէն ասելով։

Հաւատամ հաւատամ յամենասուրբ երրորդութիւն 'ի Հայր և յորդի և 'ի հոգին ս՛բ։ Հաւատամ ճաշակել զս՛բ և զկենդանարար և զփրր կազդոյծ Մարմինս քո քս ա՛ծ իմ յա՛ 'ի թողութիւն մեղաց իմոց։

Ը

Հաւատամ ըմպել զսրբաբար և զմաքրիչ Արիւնս քո՛ քս ա՛ծ իմ յա՛ 'ի թողութիւն մեղաց իմոց։

Մարմին քո՛ անապական լիցի ինձ 'ի կեանս։ Եւ ս՛բ արիւն քո՛ 'ի քաւութի և 'ի թողութիւն մեղաց։

Եւ սարկաւագն հաղորդեսցի․ և յետ հաղորդելոյն դարձցի առ ժողովուրդն և ասէ բարձր։

Երկիւղիւ և հաւատով։

Եւ դպիրքն բարձր ձայնիւ․

Ա՛ծ մեր և տ՛ր մեր երև"։

Եւ հաղորդեսցի նոր ժողովրդեանն բայց ոչ 'ի բերանն, այլ յաջին տալով զսրբութիւնն․ և ամենայն արժանաւորքն հաղորդեսցին․ և յետ հաղորդելոյն խաչակնքեսցէ զժողովուրդն ընծայելն և ասասցէ․

Փրկեա՛ տէր զժողովուրդս քո՛ և օրհնեա՛ զժառանգութիւնս քո՛․ հովուեա՛ և բարձրացո՛ զսոսա յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Եւ դպիրքն երգեսցեն․

Լցա

Լցաք 'ի բարութեանց քոց։

Քահանայն ասասցէ 'ի ժամուն։

Գոհանամք զքէն հայր ամենակալ որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ ս՜բ զեկեղեցի, տաճար սրբութեան ուր փառաբանի անուն ս՜բ երրորդութեանդ

Ալէլուիայ։

Գոհանամք զքէն քրիստոս թագաւոր՝ որ պարգեւեցեր մեզ կենդանութիւն կենարար մարմնով եւ արեամբ քով սրբով։ Շնորհեա՛ զքաւութիւն եւ ըզմեծ ողորմութիւն։

Ալէլուիայ։

Գոհանամք զքէն հոգիդ ճշմարիտ՝ որ նորոգեցեր ս՜բ զեկեղեցի։ Անարատ պահեա՛ հաւատով երրորդութեանդ յայսմ հետէ մինչեւ յաւիտեանս։ Ալէլուիայ։

Սրկ. Եւ եւս խաղաղութեան։

Եւ եւս հաւատով ընկա՛լ։

Դպ. Գոհանամք զքէն տէր։

Քահանայն ասասցէ 'ի ժամուն։

Գոհանամք զքէն ք՜ս ա՜ծ մեր որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ 'ի սրբութիւն կենդանութեան։ Սովիմբ պահեա՛ զմեզ ս՜բս եւ անարատս, բնակեալ զմեօք քո՛ ա՜ծային խնամօքդ։ Հովուեա՛ զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց եւ բարերարաց։ Որով ամ՛րացեալք յա՜մ բանսարկուին ընդդիմութեանց, քում եւեթ արժանի եղիցուք լսել ձայնի։ Եւ քեզ միայնոյ քաջայաղթ եւ ճշմարիտ հովուի հետեւել։ Եւ առ 'ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից։ Ա՜ծ մեր եւ տ՜ր մեր եւ փրկիչ յ՜ս ք՜ս։ Որ ես օրհնեալ ը՜ հօր եւ ը՜ ս՜բ հոգւոյդ ա՜։

Թ․

Խաղաղութիւն. Ամենեցուն։

Անքննին, անհաս, եր րեակ ինքնութեանդ, հաս տիչ, ընդունող, եւ անբա ժանելի, միասնական ս̄ր երրորդութեանդ, վայելէ փառք յաւիտեանս և"։

Եւ ապա առցէ զամենապատիւն սուրբ ՚ի ձեռն իւր։ Եւ երիցս երկրպագեալ համ բուրեսցէ զսուրբ սեղանն։ Եւ խոնարհեալ ՚ի մէջ եկեղեցւոյն ասասցէ զաղօթս ՚ի ձայն։

Որ օրհնես զայնոսիկ՝ որք օրհնեն զքեզ տ̄ր՝ եւ սուրբ առնես զյուսացեալս ՚ի քեզ. կեցո՛ զժողովուրդս քո՛ եւ օրհնեա՛ զժառան գութիւն քո՛։ Զլրումն եկեղեցւոյ քոյ պահեա՛։ Սրբեա՛ զնոսա՛ որք ողջու նեցին սիրով զվայելչութե տան քոյ։ Դու զմեզ փա ռաւորեա՛ ա̄ծային զօրու թ̄ե քով. եւ մի՛ թողուր զյուսացեալս ՚ի քեզ։ Զխաղաղութիւն պարգեւեա՛ ա̄մ աշխարհի։

Եկեղեցեաց. քահանա յից թագաւորաց, քրիստո նէից եւ զինուորեալ ման կանց նոցա՛. եւ ա̄մ ժողովր դեանս։ Զի ա̄մ տուրք բարիք. եւ ա̄մ պարգեւք կատարեալք, ՚ի վերուստ են իջեալք առ ՚ի քէն։ Որ ես հայր լուսոյ եւ քեզ վայելէ փառք յաւիտեանս"։

Եւ Դպիրքն Ասասցեն Երգս։

Եղիցի անուն տ̄ն օրհնեալ"։

Եւ քահանայն դարձցի առ ժողովուրդն եւ ասասցէ ՚ի ձայն։

Կատարումն օրէնաց եւ մարգարէից դու ես քրիս տոս ա̄ծ փրկիչ մեր։ Որ լցեր զամենայն հայրա կան տնօրէնութիւնս քո՛։ Լից եւ զմեզ հոգւովդ քով սրբով։

Սարկաւագն Օրհնէ։

Քհն Խաղաղութիւն ա̄մ"։

Դպ Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ Երկիւղածութե տ̄ր"։

Ար

Յ Սկզբն Աւետարանին որ ըստ
Յովհաննու։
Գլուխ Առաջին. Համար Մին։

Ի Հօրէ լուսոյ։

Ի ՍԿԶԲԱ
նէ էր Բանն.
և Բանն էր առ
Ած և Ած էր Բանն։
Նա էր ի սկզբանէ առ Ած։
Ամենայն ինչ նովաւ եղև
և առանց նորա եղև և ոչ
ինչ որ ինչ եղև։ Նովաւ
կեանք էր. և կեանքն էր
լոյս մարդկան։ Եւ լոյսն
ի խաւարի անդ լուսա
ւորէր. և խաւար նմա ոչ
եղև հասու։ Եղև այր մի
առաքեալ յԱյ անուն նմա
Յովհաննէս։ Սա եկն ի
վկայութիւն զի վկայեսցէ
վասն լուսոյն. զի ամենե
քին հաւատասցեն նովաւ։
Ոչ էր նա լոյսն այլ զի
վկայեսցէ վասն լուսոյն։
Էր լոյսն ճշմարիտ որ լու

Է

սաւորէ զամենայն մարդ
որ գալոց է յաշխարհ։
Յաշխարհի էր. և աշխարհ
նովաւ եղև. և աշխարհ զնա
ոչ ծանեաւ։ Յիւրսն եկն
և իւրքն զնա ոչ ընկալան։
Իսկ որք ընկալանն զնա
ետ նոցա իշխանութիւն որդիս
Այ լինել. որոց հաւատաս
ցեն յանուն նր. Ոյք ոչ
յարենէ, և ոչ ի կամաց մա
րմնոյ և ոչ ի կամաց առն
այլ յԱյ ծնան։ Եւ Բանն
ՄԱՐՄԻՆ
եղև և բնակեցաւ ի մեզ։
Եւ տեսաք զփառս նր
զփառս իբրև զմիածնի
առ ի Հօրէ լի շնորհօք
և ճշմարտութեամբ։

Սղ Ամ խաչիւս աղաչեսք։
Փ՚ Պահպանեա զմեզ Քս։
Սղ Օրհնեցից զՏր յամ։

Եւ քահանայն խաչանիշեսցէ զժողովուրդն
և ասասցէ բարձր։

Օրհնեալք եղիցուք ի Հն։

Եւ

Եւ դպիրքն ասացին ։

Ի տէր պարծեսցի անձն իմ ։

Եւ ընդ սաղմոսին դպրաց՝ բաշխեսցի նշխարն ։ Եւ յաւարտմանն Պատարագին դարձցի յարևելս ։ Եւ երկրպագեսցէ առաջի սրբոյ սեղանոյն երիցս և ասասցէ ։

Տէր Աստուած ողորմեա՛ ինձ ։

Եւ մտեալ յաւանդատունն մերկասցի ՚ի զգեստուցն ։ Եւ երթիցէ խաղաղութեամբ ։

Յիշատակարան Գրքոյս ։

Շնորհիւ ամենա սուրբ երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ։ աւարտեցաւ սբ գիրքս այս՝ որ կոչի Խորհրդատետր ։ ՚ի Թուականիս մերում 1211 ։ փետրուարի 12 ։ Որով ՚ի ձեռն Աբրահամ քահանայից՝ ամենայնին կատարի խորհուրդք ։

՚Ի հայրապետութեան ամենայն հայոց Տէր Յակոբայ սրբազան կաթուղիկոսին ։ որ ՚ի լուսանկար սուրբ Աթոռն Էջմիածնին ։ Եւ ՚ի պատրիարքութեան Սիոն Աղեմի՝ Տէր Թէոդորոսի Կոնդանդզեց Վարդապետի ։

Եւ մեծին Պօլսոյ Տէր Յակոբայ բանիբուն եւ ճարտարան Վարդապետի ։ Նա՛ և ՚ի վերատեսչութեան քաղաքիս զմիւռնոյ՝ Տէր Աբրահամու արդիւնաւոր և ճխմաստ Վարդապետի ։ որոյ յորդորմամբ եւ կամեցողութեամբ տպեցաւ ծախա յինս այս մատեան ։

՚Ի Նորակազմ տպարանի Մահտեսի Մարկոսի ։ որ եմ պատրաստական ծառայ ձեր ամենեցուն ։

Արդ՝ աղաչեմ զհոգևոր և զսրբազան հարսդ իմ ։ զի ՚ի ստուգին և ՚ի մաքուր աղօթս ձեր զաս, յիշեցէք հանգուցեալ զհաւրն իմ ՚ի Քս զՄահտեսի Սարգիսն և զհոգալից նորին զմահտեսի մարիամն ։ այլ և զծնողն իմ զՍահակն ։ և զմայրն իմ զՆշխոյն ։ և զայլ ամ մերձաւորսն իմ ։

Եւ վերջապէս՝ զԽօջեայ ստանցի Սարապետ որդի զՄրտազար Մահտեսի Գէորգ Նահապետին ։ Եւ դուք՝ որք յիշէք ՚ի Քէ յիշեալ լիջիք ՚ի միւսանգամ գալստեանն Քսի Ամէն ։

ՎԵՐՋ

ՀԱՍՌ ԳԱ

# ՅԻՇԱՏԱԿ

[illegible]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0023405